# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 մարտի 2016 թվականի թիվ 05-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, ՀՀ "Հողային օրենսգրքի" 63-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով "Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց" փակ բաժնետիրական ընկերությանը հողամասեր օտարելու մասին" ՀՀ կառավարության 20.01.2016թ. N 34-Ա որոշումը, Սարամեջ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1.Տալ համաձայնություն՝ համայնքի սեփականություն համարվող, 3 փողոց թիվ 8 հասցեում գտնվող 0.01 հա հողամասը (ծածկագիրը 06-098-0058-0006, նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ կապի) ուղղակի վաճառքի ձևով օտարել "Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց" փակ բաժնետիրական ընկերությանը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում վերգետնյա թվային հեռուստահեռարձակման համակարգի ներդրման ծրագրի իրականացման նպատակով:

2.Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով՝ 14400 ՀՀ դրամ:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ(6 ) ԴԵՄ(0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՂՎԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՇԱԼԻԿՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՋՈՆԵՐԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՍԼԱՎԻԿ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 մարտի 2016 թվականի թիվ 06-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով , 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 20-ի << ՀՀ օրենսդրությամբ Սարամեջ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին >> թիվ 29 –Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկվող հանձնաժողովի եզրակացությունները :

Սարամեջ համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի :

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10 – օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները :

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ(6) ԴԵՄ(0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՂՎԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՇԱԼԻԿՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՋՈՆԵՐԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՍԼԱՎԻԿ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Սարամեջ համայնքի ավագանու
2016 թվականի մարտի 03 -ի N 06-Ա որոշման

Ց ՈՒ Ց Ա Կ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Խաչատրյան Շուշան – 50000 դրամ (ուսման վարձ)
2.Թաղևոսյան Նաիրա _ 35000 դրամ (ուսման վարձ)
3.Թաղևոսյան Էլմիրա _ 35000 դրամ (ուսման վարձ)
4.Թորոսյան Գեղամ _ 40000 դրամ (ուսման վարձ)
5.Ներսիսյան Ալիսա _ 50000 դրամ (ուսման վարձ)
6.Տոնոյան Հովհաննես _ 40000 դրամ (ուսման վարձ)
7.Թաղևոսյան Հուսիկ _ 40000 դրամ (ուսման վարձ)
8.Տոնոյան Ինեսա _50000 դրամ (ուսման վարձ)

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 340000 ( երեք հարյուր քառասուն հազար) դրամ:

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ.ՀԱԿՈԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 մարտի 2016 թվականի թիվ 07-Ն

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի II կետի ժ) ենթակետով, քանի որ Սարամեջ համայնքում ՀՀ գյուղատնտոսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից իրականացվում է ծրագիր և ծրագրում առկա է եռակողմ պայմանագիր «ԳԾԻԳ» ՊՀ-ի Լոռու մարզի Սարամեջի համայնքապետարանի և «Սարամեջ համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի միջև, որի շրջանակում 100 տնտեսությունից բաղկացած կոոպերատիվը համայնքի հեռագնա արոտների ճանապարհների, ջրարբիացման, հովվի կացարանի և փարախի կառուցման համար, որի 95%-ը պետք է կատարի «ԳԾԻԳ» ՊՀ-Ն և հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը ավագանին

### Ո Ր Ո Շ Ե Ց՝

Թույլատրել համայնքի ղեկավարին Սարամեջ համայնքի բյուջեի վարչական մասի այլ ընթացիկ դրամաշնորհներ 04.02.01 դասակարգման 4639 հոդվածից 1000.000 (մեկ մլն.)դրամ, որպես համաֆինանսավորում հատկացնել «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի համայնքի հեռագնա արոտների ճանապարհների, ջրարբիացման, հովվի կացարանի և փարախի կառուցման համար:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ(6) ԴԵՄ(0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՂՎԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՇԱԼԻԿՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՋՈՆԵՐԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՍԼԱՎԻԿ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ